



ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՅԻ»  
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

(374 10) 74 72 46 (374 91) 43 10 99

0064, Երևան, Բաֆֆու 57  
Raffy 57, Yerevan  
Ереван, ул. Раффи 57

«MKHITAR SEBASTATSI» EDUCATIONAL COMPLEX MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA  
ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС «МХИТАР СЕБАСТАЦИ» Министерства образования и науки РА

<https://www.facebook.com/mxitaar.sebastaci?fref=ts> [info@mskh.am](mailto:info@mskh.am) [www.mskh.am](http://www.mskh.am)

19-02-055

19.02.2019թ.

## ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՊԱՐՈՆ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Փաշինյան.

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ֆինանսավորման հետ կապված մի հարցի:

ՀՀ 2019թ. պետական բյուջեով նախատեսված «Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում. **հեղինակային կրթական ծրագրերի վերամշակում և իրականացում՝ անհատի օժտվածության զարգացման բաց համակարգ՝ ստեղծագործ անհատի կրթական պատվերի իրականացում**» անվանումով նկարագրությամբ տողով (ՀՀ 2019թ. պետական բյուջեի մասին օրենք, հավելված N1, աղյուսակ N2, դասիչ՝ 1146, ծրագիր՝ 11014) հատկացված է **116 մլն 968,1 հազար դրամ**, որը հաշվարկված է, ծախսվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ պետական այլընտրանքային հեղինակային կրթական ծրագրեր մշակող, կազմակերպող ու տարածող «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի՝ կանոնադրությամբ որոշված բնականոն գործունեության **ապահովման համար**:

ՀՀ կառավարության՝ 2018թ. դեկտեմբերի 27-ի N1515 «Հայաստանի Հանրապետության 2019 թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջացառումների մասին» որոշման N5 հավելվածի աղյուսակ 8-ում պետական բյուջեով հատկացված 116 մլն 968,1 հազար դրամ գումարը բաժանված է երկու մասի՝ 67802500 դրամ և 49165600 դրամ: Գումարի առաջին մասի համար որպես դրամաշնորհ ստացող տնտեսվարող սուբյեկտ ճանաչվել է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը, իսկ երկրորդ մասի համար՝ մրցույթով ընտրված կազմակերպություն: Կրթահամալիրի

դեպքում 2019թ. պետական բյուջեով որոշված գումարի նպատակը ոչ թե «տնտեսության որևէ ճյուղի (ոլորտի) կամ գործունեության որևէ տեսակի խթանման (խրախուսման) նպատակն» է, որպես դրամաշնորհ, այլ հեղինակային կրթական ծրագրերի անընդհատության ապահովումը: ՀՀ կառավարության 2018թ. N1515 որոշումից հետևում է, որ 2019-ին տարվա կեսից «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական այլընտրանքային, հեղինակային կրթական ծրագիրն ընդհատվում է: Սրանով դադարեցվում են.

- կրթահամալիրում հեղինակային կրթական ծրագրերի ստեղծման, լրամշակման աշխատանքները, այդ թվում՝ ուսումնական նյութերի, նախագծերի մշակումը, մեդիագրադարանի շարունակական լրացումը,
- կրթահամալիրի ուսումնական մասնաշենքերում անլար ինտերնետի շուրջօրյա սպասարկումը.
- կրթահամալիրի մանկավարժական աշխատողների անընդհատ վերապատրաստումը.
- նախադպրոցական կրթության 12 խմբի (300 երեխա) գործունեությունը (մինչդեռ նախադպրոցական կրթության մատչելիությունը, հասանելիությունը, երեխաների ընդգրվածության ավելացումը ՀՀ կառավարության ծրագրի նպատակներից են).
- օժտվածության զարգացման բաց, յուրաքանչյուրին հասանելի համակարգի գործունեությունը, այդ թվում՝ արտակարգ ընդունակություն դրսևորած սովորողների հետ աշխատանքները, ստեղծագործական խմբերի, ակումբների գործունեությունը, և լրացուցիչ, արտադպրոցական կրթության կազմակերպումը:

Սա այն դեպքում, երբ ՀՀ պետական 2019-2021 թթ միջնաժամկետ ծախսային ծրագրում ներառված է «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում» ծրագիրը, որի հեղինակը ՀՀ օրենքով և կրթահամալիրի կանոնադրությամբ կրթահամալիրի մանկավարժական հավաքանին է, Հայաստանում այսօր խնդիրը հեղինակային կրթական ծրագրի տարածումն է, հեղինակային կրթական ծրագրի բաց ցանցի առաջացումը՝ որպես հանրակրթության զարգացման ճանապարհ:

Խնդրում ենք վերանայել ՀՀ կառավարության թ. 1515 որոշման N5 հավելվածի աղյուսակ 8-ի համապատասխան կետը և պայմաններ ապահովել ամբողջ տարվա ընթացքում կրթահամալիրի լիաուժ գործունեության համար:

Առանձին քննարկումով խնդրում ենք անդրադառնալ նաև կրթահամալիրի զարգացման, հեղինակային կրթական ծրագրի ցանցի ձևավորման խնդիրներին:

Կցում ենք մեր ՀՀ ԿԳՆ ուղղված 09.01.2019-ի թ. 19-01-005, 15.01.2019-ի թ. 19-01-010 գրությունները՝ կրթահամալիրի՝ հանրային, բաց, ամբողջական ներառական համալիր-դպրոցի տնտեսության ֆինանսական կազմակերպման մասին տեղեկանքով, որը ցույց է տալիս, թե ինչ դժվարությամբ է գտնվել ու կայացել Հայաստանում այսօր միակ՝ ՀՀ օրենքով որոշված պետական այլընտրանքային հեղինակային ծրագրի ֆինանսական կազմակերպման մոդելը:



**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝**

**Ա. ԲԼԵՅԱՆ**